ՐԱՖՖԻ

Թաքուցած գանձ

Ասեմ. աղջի, արմենուհի,
Թե քո աստված կսիրես,
Ձգե՛ քողը ծածկած դեմքեդ,
Գոնյա տեսնեմ քո երես:

Ասաց, Լռե՛, դու, ո՛վ մանուկ,
Դեռևս անփորձ տղամարդ,
Մի՞թե չես տեսել ծածկոց,
Երբ վառվում է կարմիր վարդ:

Ասեմ. աղջի, արմենուհի,
Ցույց տո՛ւր տեսնեմ քո աչերը,
Ի սեր աստծո ինձ շնորհե
Քաղել քաղցրիկ զույգ պաչեր:

Ասաց, Լռե՛, դու, ո՛վ պատանի,
Ինչ հանդուգն ես դու եղել,
Միթե չե՞ս տեսել երկնքում.
Երբ փայլում են զույգ աստղեր:

Ասեմ. աղջի, արմենուհի,
Տեսնեմ ի՞նչ է քո ծոցում,
Այնպես անուշ հոտով բուրում,
Ինձ բերում է հիացում:

Ասաց, Լռե՛, դու, ով մանուկ,
Այնտեղ բուրում է թուրինջ,
Մի՞թե պարտեզում չե՞ս քաղել
Նուռն, լիմոն կամ նարինջ:

Ասաց, Լռե՛, ով անամոթ,
Այդ պահանջե սեր և զոհ,
Դու նվիրե անձդ ինձի,
Որ ես լինեմ քեզնից զոհ: